

ԺԵ. դարուն կը յիշուի Սարգիս վրդ. Հերմոնավանցի, վերայի-  
սոյ և քաջ ռաբունի տիտղոսներով. (Սիսական, էջ 126):

ՍՍՐԳԻՍ ՎՐԴ. ՀԱՃԸՆՑԻ.— Մբ. կնիքը 1822. Ձս. 1822ին  
ՏԲ. 1828ին. Նւ. Տրգրանակերտի եւ Պարսկաստանի (1836—  
39). դարսաւարնկաղ, խորհրդակալ (1850). կը վախճանի 1850ին.  
1828ին ընդօրինակած է Անսառ նորագոյն հանստօտեայ ի Պողոս  
պսոփե գիրքը:

ՍՍՐԳԻՍ ՎՐԴ. ՀԸԶՎԷՑԻ.— Մբ. պոստսկֆնի. Ձս. 1811ին:

ՍՍՐԳԻՍ ՎՐԴ.— Մբ. Հրաւիրակ ուխտաւորներու (ՄԶ.  
Թ. 494) 1762ին. Նւ. Կարնոյ և փոխանորդ 1774ին:

ՍՍՐԳԻՍ ՎՐԴ. ՄՍԶՄԱՆ.— Մբ. մարգարտեայ թագ մը  
յիշատակ տուած է Ս. Յակոբի վանքին (Յուգ. Պ.):

ՍՍՐԳԻՍ ՎՐԴ. ՄԱԼԵԱՆ, ՀԱՃԸՆՑԻ.— Մբ. եպոս. կը ձեռ-  
նադրուի 1773ին. ժամանակակիցները կը վկային թէ եր առ զի-  
սուն եւ արժանի պատուոյ եպիսկոպոսութեան. կ'ընտրուի Փկե. եւ  
կը վախճանի Պոլիս 1778ին. (Դիւան, Մակր պատկիջ, գիրք Ժ.  
էջ 467): Սարգիս վրդ. ունի աշխատասիրութիւն մը Հարեւա-  
ստրիլն օրինակաց Աստուածաշունչի խորագրով, զոր գրած է 1773  
ին Ս. Յակոբի վանքին մէջ, տասն և հինգ օրինակ հին կտա-  
կարանի եւ քսան օրինակ նոր կտակարանի ձեռագրերը բաղ-  
դատած է Աբբայի տպագիր Աստուածաշունչին հետ եւ բո-  
լոր տարբերութիւնները ուրոյն տեարակներու մէջ հաւա-  
քած: Սարգիս վրդ. առաջին անգամ ինքն ղրտած է թէ՛  
Մնայորդաց գիրքերուն սովորական թարգմանութիւնէն զատ  
ձեռագիրներու մէջ կը գտնուի հնագոյն հայ թարգմանութիւն  
մը, Առաջին եւ երկրորդ Մնացորդաց գիրքն յաւեանից սարսաւոյն գա-  
նեցան, ինչ որ յետոյ Մագիստրոս Գ. Սալաթեանց հաստատեց.  
(Արարտ, 1896, Բագլ. 1900, էջ 117): Հաճընցիին այս աշ-  
խատասիրութեան ընդօրինակութիւնը կը մնայ Վիեննայի ար-  
քունի ձեռագրաց Մատենադարանին մէջ (Հա. 1891, էջ 15—  
16): նոյն ընդօրինակութեան մէջ կը գտնուի յիշատակարան մը  
ուր այս Սարգիս վրդ. ընդարձակ տեղեկութիւններ կու տայ իր  
անձին և իր այս աշխատութեան մասին (Տաշ. Յուգ. էջ 630—32):

ՍՍՐԳԻՍ ՎՐԴ. ՄՇԵՑԻ.— Մբ. Ձս. 1822ին: